ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՊՁԲ-4/9-1

ք. Երևան 18.09.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից և «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Մուրադյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 30 541 560 (երեսուն միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Մարկվատի 12
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163018262374
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02238317
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ՏՆՕՐԵՆ
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-4/9-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական ցուցանիշներ	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը
1	Տանող ատամնանիվ	5320-2402110-30 որոշարանային աթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
2	Տարվող ատամնանիվ	5320-2402120-30 որոշարանային աթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
3	Տանող ,տարվող ատամնանիվների լրակազմ	5320-2402020 Գործարանային փաթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
4	Բլոկավորման երկժանի	55102-2409016 Գործարանային փաթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
5	Բլոկավորման ագուց	55102-2403026 Գործարանային փաթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
6	Գեներատոր	4001.3771-53 Գործարանային փաթեթավորմամբ:	ПРАМО	ПРАМО	Ռ.Դ.
7	Տարվող ատամնանիվ	5320-2402120-10 Գործարանային փաթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
8	Տանող ատամնանիվ	5320-2402110-10 Գործարանային փաթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
9	Տանող ատամնանիվ	5320-2402120-20 Գործարանային փաթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
10	Տանող ատամնանիվ	5320-2402110-20 Գործարանային փաթեթավորմամբ:	ПАО КАМАЗ	ПАО КАМАЗ	Ռ.Դ.
11	ՈՒժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	4320-3510010 Գործարանային փաթեթավորմամբ	АЗ <<УРАЛ>>	АЗ <<УРАЛ>>	Ռ.Դ.
12	ՈՒժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	4320-3510011 Գործարանային փաթեթավորմամբ	АЗ <<УРАЛ>>	АЗ <<УРАЛ>>	Ռ.Դ.
13	Կցորդման զամբյուղ հավաքական (տանող սկավառակ)	130-1601090 Գործարանային փաթեթավորմամբ:	ТЮМЕНЬ	ТЮМЕНЬ	Ռ.Դ.
14	Վառելիքի մղիչ	130-1106010 Գործարանային փաթեթավորմամբ:	ПЕКАР	ПЕКАР	Ռ.Դ.
15	Հետին լապտեր	ФП-132А-04 Գործարանային փաթեթավորմամբ:	ОСВАР	ОСВАР	Ռ.Դ.
16	Շրջադարձի ցուցիչի կողային լապտեր	УП-101-3726010-01 Գործարանային փաթեթավորմամբ:	ОСВАР	ОСВАР	Ռ.Դ.
17	Գեներատոր	1661-3701000, Գործարանային փաթեթավորմամբ:	КЗАТЭ	КЗАТЭ	Ռ.Դ.
18	Կոմուտատոր տարանցային	ТК-200-01 Գործարանային փաթեթավորմամբ:	СОАТЭ	СОАТЭ	Ռ.Դ.
19	Կցորդման սկավառակի վրադիր	130-1601138 (հաստությունը ոչ պակաս 4մմ. Գամի անցքերով) Գործարանային փաթեթավորմամբ:	ВАТИ	ВАТИ	Ռ.Դ.
20	Կցորդման համակարգի սեղմող առանցքակալ հավաքական	130-1602052 Գործարանային փաթեթավորմամբ:	ЗИЛ	ЗИЛ	Ռ.Դ.
21	Արգելակման կոճղակների մակադրակ	130-3502105 Գործարանային փաթեթավորմամբ:	ВАТИ	ВАТИ	Ռ.Դ.
22	Կցորդման զամբյուղ հավաքական /տանող սկավառակ/	130-1601090 Գործարանային փաթեթավորմամբ:	ТЮМЕНЬ	ТЮМЕНЬ	Ռ.Դ.
23	Ղեկային մեխանիզմ հավաքական	4331-3400020-02 Գործարանային փաթեթավորմամբ:	ЗИЛ	ЗИЛ	Ռ.Դ.
24	Շարժիչի միջադիրների լրակազմ	130-100-170 ВС Գործարանային փաթեթավորմամբ:	ВИОЛ-СТ	ООО ВИОЛ-СТ	Ռ.Դ.
25	Առջևի կամրջակի աջ կիսասռնի հավաքական	131-2303068 Գործարանային փաթեթավորմամբ:	ЗИЛ	ЗИЛ	Ռ.Դ.
26	Առջևի կամրջակի ձախ կիսասռնի հավաքական	131-2303069 Գործարանային փաթեթավորմամբ:	ЗИЛ	ЗИЛ	Ռ.Դ.
27	Օդի էլեկտրոմագնիսական փական (ագրեգատների կառավարման)	131-1804270-Б Գործարանային փաթեթավորմամբ:	Йошкало-Ола	Йошкало-Ола	Ռ.Դ.
28	Վառոցքի բաշխիչ առանց հպակի	Р-351 Գործարանային փաթեթավորմամբ:	СОАТЭ	СОАТЭ	Ռ.Դ.

29	Ղեկային համակարգի լայնական փորուտի ձգաձողի գլխիկ աջ	130-3003062 Գործարանային փաթեթավորմամբ:	ЗИЛ	ЗИЛ	Ռ.Դ.
30	Ղեկային համակարգի լայնական փորուտի ձգաձողի գլխիկ ձախ	130-3003063-A Գործարանային փաթեթավորմամբ:	ЗИЛ	ЗИЛ	Ռ.Դ.
31	Թերմոստատ	108-1306100-04 Գործարանային փաթեթավորմամբ:	ПРАМО	ПРАМО	Ռ.Դ.
32	Դիմապակի	3205-5206010-02 ՊԱԶ-3205 աջ երկշերտ միջանկյալ թաղանթով: Կամ համարժեք: Գործարանային փաթեթավորմամբ:	БОР	БОР	Ռ.Դ.
33	Դիմապակի	3205-5206011-02 ՊԱԶ-3205 ձախ երկշերտ միջանկյալ թաղանթով: Գործարանային փաթեթավորմամբ:	БОР	БОР	Ռ.Դ.
34	Դիմապակի	4301-5206010 ԳԱԶ-3308 երկշերտ միջանկյալ թաղանթով : Գործարանային փաթեթավորմամբ:	БОР	БОР	Ռ.Դ.
35	Բաժանարար տուփ հավաքական	33081-1800006 դիզելային շարժիչով մեքենայի: Գործարանային փաթեթավորմամբ:	ГАЗ	ГАЗ	Ռ.Դ.
36	Վազքաչափ	16.3802 Գործարանային փաթեթավորմամբ:	Автоприбор	Автоприбор	Ռ.Դ.
37	Արագաչափ հավաքական	(48.3802) 3-433710 Գործարանային փաթեթավորմամբ:	Автоприбор	Автоприбор	Ռ.Դ.
38	Յուղի ճնշման ցուցիչ	УК130 А-3810010 Գործարանային փաթեթավորմամբ:	Автоприбор	Автоприбор	Ռ.Դ.
39	Ջրի ջերմաստիճանի ցուցիչ	УК-145 А-3807010 Գործարանային փաթեթավորմամբ:	Автоприбор	Автоприбор	Ռ.Դ.
40	Գեներատոր	5101.3701000-01 Գործարանային փաթեթավորմամբ:	КЗАТЭ	КЗАТЭ	Ռ.Դ.
41	Ռադիատորի ծորակ	353-1305010-А Գործարանային փաթեթավորմամբ:	АЗ <<УРАЛ>>	АЗ <<УРАЛ>>	Ռ.Դ.
42	Գեներատոր	1621-3701000 Գործարանային փաթեթավորմամբ:	КЗАТЭ	КЗАТЭ	Ռ.Դ.
43	Վառոցքի բաշխիչ	2402.3706-10 Գործարանային փաթեթավորմամբ:	СОАТЭ	СОАТЭ	Ռ.Դ.
44	Կոմպրեսոր հավաքական	66-02-4201008-10 Գործարանային փաթեթավորմամբ:	ГАЗ	ГАЗ	Ռ.Դ.
45	Լուսարձակ հավաքական	ФГ122-3711010БВ Գործարանային փաթեթավորմամբ:	ОСВАР	ОСВАР	Ռ.Դ.
46	Կցորդման զամբյուղ հավաքական (տանող սկավառակ)	53-1601090-11 Գործարանային փաթեթավորմամբ:	ГАЗ	ГАЗ	Ռ.Դ.
47	Ընդլայնացման բաք կափարիչով հավաքական	2101-1311014/65 Գործարանային փաթեթավորմամբ:	Сызрань	Сызрань	Ռ.Դ.
48	Արգելակման կոճղակների մակադրակ	16.3502110 Գործարանային փաթեթավորմամբ:	ВАТИ	ВАТИ	Ռ.Դ.
49	Ղեկային մեխանիզմ հավաքական	6611-3400014-01 Գործարանային փաթեթավորմամբ:	ГАЗ	ГАЗ	Ռ.Դ.
50	Գործարկիչի խարիսխ	СТ230.3708200 Գործարանային փաթեթավորմամբ:	БАТЭ	БАТЭ	ԲԵԼ.
51	Կցորդման զամբյուղ հավաքական	53-1601090-11 Գործարանային փաթեթավորմամբ:	ГАЗ	ГАЗ	Ռ.Դ.
52	Կցորդման միացման շարժաբերի գլան	66-01-1602510-10 Գործարանային փաթեթավորմամբ:	ГАЗ	ГАЗ	Ռ.Դ.

Ծանոթություն՝
-Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
-Ապրանքները պետք է հանձնվեն ԱԾ կենտրոնական պահեստ (Եղվարդ զինական):
-Պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացումը կիրառելի է :

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	2018թ. ըստ եռամսյակների IV եռ բայց ոչ ուշ քան 10.12.2018 թ
1	Տանող ատամնանիվ	հատ	20	16 000	320 000	20
2	Տարվող ատամնանիվ	հատ	20	32 700	654 000	20
3	Տանող ,տարվող ատամնանիվների լրակազմ	հատ	10	57 750	577 500	10
4	Բլոկավորման երկժանի	հատ	10	43 750	437 500	10

5	Բլոկավորման ագույց	հատ	10	16 350	163 500	10
6	Գեներատոր	հատ	10	49 750	497 500	10
7	Տարվող ատամնանիվ	հատ	10	32 000	320 000	10
8	Տանող ատամնանիվ	հատ	10	15 000	150 000	10
9	Տանող ատամնանիվ	հատ	10	35 000	350 000	10
10	Տանող ատամնանիվ	հատ	10	15 500	155 000	10
11	Ուժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	հատ	50	43 500	2 175 000	50
12	Ուժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	հատ	50	43 500	2 175 000	50
13	Կցորդման զամբյուղ հավաքական (տանող սկավառակ)	հատ	40	34 500	1 380 000	40
14	Վառելիքի մղիչ	հատ	150	5 850	877 500	150
15	Հետին լապտեր	հատ	200	1 250	250 000	200
16	Շրջադարձի ցուցիչի կողային լապտեր	հատ	400	225	90 000	400
17	Գեներատոր	հատ	30	33 250	997 500	30
18	Կոմուտատոր տարանցային	հատ	100	18 450	1 845 000	100
19	Կցորդման սկավառակի վրադիր	հատ	200	1 180	236 000	200
20	Կցորդման համակարգի սեղմող առանցքակալ հավաքական	հատ	200	4 250	850 000	200
21	Արգելակման կոճղակների մակադրակ	հատ	300	1 035	310 500	300
22	Կցորդման զամբյուղ հավաքական /տանող սկավառակ/	հատ	30	36 450	1 093 500	30
23	Ղեկային մեխանիզմ հավաքական	հատ	10	61 250	612 500	10
24	Շարժիչի միջադիրների լրակազմ	լ-կ	100	6 280	628 000	100
25	Առջևի կամրջակի աջ կիսաառանցքի հավաքական	հատ	2	66 450	132 900	2
26	Առջևի կամրջակի ձախ կիսաառանցքի հավաքական	հատ	2	50 280	100 560	2
27	Օդի էլեկտրոմագնիսական փական (ագրեգատների կառավարման)	հատ	20	8 400	168 000	20
28	Վառոցքի բաշխիչ առանց հպակի	հատ	40	8 550	342 000	40
29	Ղեկային համակարգի լայնական փորուտի ձգաձողի գլխիկ աջ	հատ	30	6 550	196 500	30
30	Ղեկային համակարգի լայնական փորուտի ձգաձողի գլխիկ ձախ	հատ	30	6 550	196 500	30
31	Թերմոստատ	հատ	100	1 580	158 000	100
32	Դիմապակի	հատ	10	21 850	218 500	10
33	Դիմապակի	հատ	10	21 850	218 500	10
34	Դիմապակի	հատ	20	16 450	329 000	20
35	Բաժանարար տուփ հավաքական	հատ	3	493 500	1 480 500	3
36	Վազքաչափ	հատ	50	5 250	262 500	50
37	Արագաչափ հավաքական	հատ	20	9 830	196 600	20
38	Յուղի ճնշման ցուցիչ	հատ	50	4050	202 500	50
39	Ջրի ջերմաստիճանի ցուցիչ	հատ	50	4050	202 500	50
40	Գեներատոր	հատ	20	39 200	784 000	20
41	Ռադիատորի ծորակ	հատ	200	1 350	270 000	200
42	Գեներատոր	հատ	40	32 200	1 288 000	40
43	Վառոցքի բաշխիչ առանց հպակի	հատ	30	18 200	546 000	30
44	Կոմպրեսոր հավաքական	հատ	20	45 450	909 000	20
45	Լուսարձակ հավաքական	հատ	60	4 450	267 000	60
46	Կցորդման զամբյուղ հավաքական (տանող սկավառակ)	հատ	20	28 700	574 000	20
47	Ընդլայնացման բաք կափարիչով հավաքական	հատ	40	1 700	68 000	40
48	Արգելակման կոճղակների մակադրակ	հատ	300	1 485	445 500	300
49	Ղեկային մեխանիզմ հայելաբերան	հատ	30	74 300	2 229 000	30
50	Գործարկիչի խարիսխ	հատ	50	18 200	910 000	50
51	Կցորդման զամբյուղ նախաբական	հատ	20	28 500	570 000	20
52	Կցորդման միացման շարժիչների գլան	հատ	30	4 350	130 500	30

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

ԿԱՏԱՐՈՂ
"Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ" ՍՊԸ-ի
Տնօրեն

Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

N ԲՄԱՊԸ-4/9-1 պայմանագրի

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-4/9-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.		
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Տանող ատամնանիվ	320 000	320 000	320 000
2	Տարվող ատամնանիվ	654 000	654 000	654 000
3	Տանող ,տարվող ատամնանիվների լրակազմ	577 500	577 500	577 500
4	Բլոկավորման երկժանի	437 500	437 500	437 500
5	Բլոկավորման ագույց	163 500	163 500	163 500
6	Գեներատոր	497 500	497 500	497 500
7	Տարվող ատամնանիվ	320 000	320 000	320 000
8	Տանող ատամնանիվ	150 000	150 000	150 000
9	Տանող ատամնանիվ	350 000	350 000	350 000
10	Տանող ատամնանիվ	155 000	155 000	155 000
11	ՈՒժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	2 175 000	2 175 000	2 175 000
12	ՈՒժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	2 175 000	2 175 000	2 175 000
13	Կցորդման զամբյուղ հավաքական (տանող սկավառակ)	1 380 000	1 380 000	1 380 000
14	Վառելիքի մղիչ	877 500	877 500	877 500
15	Հետին լապտեր	250 000	250 000	250 000
16	Շրջադարձի ցուցիչի կողային լապտեր	90 000	90 000	90 000
17	Գեներատոր	997 500	997 500	997 500
18	Կոմուտատոր տարանցային	1 845 000	1 845 000	1 845 000
19	Կցորդման սկավառակի վրադիր	236 000	236 000	236 000
20	Կցորդման համակարգի սեղմող առանցքակալ հավաքական	850 000	850 000	850 000
21	Արգելակման կոճղակների մակադրակ	310 500	310 500	310 500
22	Կցորդման զամբյուղ հավաքական /տանող սկավառակ/	1 093 500	1 093 500	1 093 500
23	Ղեկային մեխանիզմ հավաքական	612 500	612 500	612 500
24	Շարժիչի միջադիրների լրակազմ	628 000	628 000	628 000
25	Առջևի կամրջակի աջ կիսաառնի հավաքական	132 900	132 900	132 900
26	Առջևի կամրջակի ձախ կիսաառնի հավաքական	100 560	100 560	100 560
27	Օդի էլեկտրոմագնիսական փական (ագրեգատների կառավարման)	168 000	168 000	168 000
28	Վառոցքի բաշխիչ առանց հպակի	342 000	342 000	342 000
29	Ղեկային համակարգի լայնական փորուտի ձգաձողի գլխիկ աջ	196 500	196 500	196 500
30	Ղեկային համակարգի լայնական փորուտի ձգաձողի գլխիկ ձախ	196 500	196 500	196 500
31	Թերմոստատ	158 000	158 000	158 000
32	Դիմապակի	218 500	218 500	218 500
33	Դիմապակի	218 500	218 500	218 500
34	Դիմապակի	329 000	329 000	329 000
35	Բաժանարար տուփ հավաքական	1 480 500	1 480 500	1 480 500
36	Վաղքաչափ	262 500	262 500	262 500
37	Արագաչափ հավաքական	196 600	196 600	196 600
38	Յուղի ճնշման ցուցիչ	202 500	202 500	202 500
39	Ջրի ջերմաստիճանի ցուցիչ	202 500	202 500	202 500
40	Գեներատոր	784 000	784 000	784 000
41	Ռադիատորի ծորակ	270 000	270 000	270 000
42	Գեներատոր	1 288 000	1 288 000	1 288 000
43	Վառոցքի բաշխիչ	546 000	546 000	546 000
44	Կոմպրեսոր հավաքական	909 000	909 000	909 000
45	Լուսարձակ հավաքական	267 000	267 000	267 000
46	Կցորդման զամբյուղ հավաքական (տանող սկավառակ)	574 000	574 000	574 000
47	Ընդլայնացման բաք կափարիչով հավաքական	68 000	68 000	68 000
48	Արգելակման կոճղակների մակադրակ	445 500	445 500	445 500
49	Ղեկային մեխանիզմ հավաքական	2 229 000	2 229 000	2 229 000
50	Գոլորշիչի [illegible]	910 000	910 000	910 000
51	Կցորդման զամբյուղ հավաքական	570 000	570 000	570 000
52	Կցորդման [illegible] շարժակների գլան	130 500	130 500	130 500

CPV կոդ 34331100/1/9/1

ԴԱՏՎԻՐԱՏՈՒ
Հ[illegible]պետության նախարարություն
[illegible]պետության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
"Վ. ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ" ՍՊԸ-ի
Տնօրեն

Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 3
N ԲՄԱՊՁԲ-4/9-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԲՄԱՊՁԲ-4/9-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն